**Հաստատված է**
Հայաստանի եվրոպական համալսարանի
գիտական խորհրդի
2023 թվականի օգոստոսի 31-ի
թիվ 45 նիստում,
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

**Approved by:**
The Scientific Council of
European University of Armenia
At the session N 45
Held on 31 August, 2023
Rector: H. Bisharyan

(ստորագրություն, Կ.Տ./ Signature)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան, ՀԵՀ) գիտական խորհրդի (այսուհետ՝ գիտական խորհուրդ) կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են ՀՀ «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության և կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշումները, Համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կանոնակարգերը և այլ իրավական ակտեր:

1.3. Սույն կանոնակարգը և նրանում կատարված փոփոխությունները և

# REGULATION ON SCIENTIFIC COUNCIL OF EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

## 1. GENERAL PROVISIONS

1.1. This regulation defines the procedure for the formation and operation of the Scientific Council (hereinafter: the Scientific Council), of the European University of Armenia (hereinafter: the University, EUA), the process for preparing and holding meetings, and making decisions.

1.2. The legal bases of this order are the laws of the RA "On Foundations", "On Education", "On Higher and Postgraduate Professional Education", the decisions of the RA government and the authorized body of the state administration of education, the University charter, the University's internal regulations and other legal acts.

1.3. This regulation and the changes and additions made to it are approved by the Scientific Council.

լրացումները հաստատում է գիտական խորհուրդը:

## 2. ՀԵՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գիտական խորհուրդը ՀԵՀ-ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

2.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը ***հինգ տարի է***.

2.3. ***Գիտական խորհուրդը՝***

ա) հաստատում է իր կանոնակարգը.

բ) Ռեկտորի ներկայացմամբ հաստատում է վճարովի հիմունքներով՝ ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերի քանակը,

գ) քննարկում և ընդունում է որոշումներ ընդունելության վերաբերյալ,

դ) քննարկում է մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկերը,

ե) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վարձավճարների չափը,

զ) հաստատում է ուսումնական պլանները ըստ մասնագիտությունների,

է) որոշում է շրջանավարտների համար ամփոփիչ ատեստավորման պահանջները՝ ըստ կրթական ծրագրերի,

ը) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը,

## 2. AUTHORIZATIONS OF THE EUA SCIENTIFIC COUNCIL

2.1. The Scientific Council is a collegial body that plans, coordinates and regulates the educational, research and scientific-technical activities of EUA.

2.2. The term of authorizations of the Scientific Council is **five years.**

2.3. **The Scientific Council:**

a) approves its regulations;

b) upon presentation of the Rector, approves the number of admission places according to professions on a paid basis,

c) discusses and makes decisions on admission,

d) discusses the lists of professions and specializations,

e) discusses and approves educational programs, determines the amount of tuition fees according to professions,

f) approves curricula based on specialties,

g) determines the summative certification requirements for graduates according to educational programs,

h) approves the procedures for the elections of deans of faculties, heads of chairs and academic staff,

i) approves the staff list of lecturers, organizes the competitive selection of candidates for vacant positions,

j) submits recommendations on establishing institutions, branches, representative offices,

թ) հաստատում է պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքացուցակը, կազմակերպում թափուր տեղերի թեկնածուների մրցութային ընտրությունը,

ժ) ներկայացնում է առաջարկություններ հիմնարկներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, բաժանմունքներ, ֆակուլտետներ, ամբիոններ, կառուցվածքային այլ ստորաբաժանումներ ստեղծելու մասին,

ի) սահմանում և շնորհում է պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ, ներկայացնում թեկնածություններ՝ գիտական կոչումների, հանրապետական ու միջազգային մրցանակների ու պարգևների համար,

լ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ մասնաճյուղի կանոնադրությունները և այլ կանոնակարգեր:

խ) քննարկում է համալսարանի մասնաճյուղերի տարեկան գործունեության մասին հաշվետվությունները,

ծ) քննարկում է արտասահմանյան կապերի ուղղորդվածությունը, միջազգային համագործակցության ծրագրերը,

կ) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ՀԵՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

հ) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ,

departments, faculties, chairs, and other structural divisions,

k) defines and awards honorary degrees, awards, nominal and other scholarships, submits nominations for scientific degrees, national and international prizes and awards,

l) approves the charters and other regulations of structural units, including branches.

m) discusses the annual activity reports of University branches,

n) discusses the direction of foreign relations, international cooperation programs,

o) discusses the main and prospective directions of scientific activity, listens to scientific reports about the results of the most important scientific research and scientific-methodological works carried out at EUA,

p) discusses and guarantees the publication of monographs, textbooks, education manuals, collections and other materials,

q) creates permanent and temporary commissions attached to the scientific council as necessary, defines their structure, the procedure for formation of the composition and the working procedure,

r) exercises other powers arising from the legislation of the Republic of Armenia, the EUA Charter and this regulation.

ժողովածուներ և այլ նյութեր,

ծ) ըստ անհրաժեշտության ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը,

ղ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից, ՀԵՀ կանոնադրությունից և սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

## 3. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

3.1. Ի պաշտոնե ընտրվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի թվակազմի 50 տոկոսը:

3.2. Գիտական խորհրդի կազմում ***ի պաշտոնե*** ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), մասնաճյուղերի տնօրենները, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, գրադարանի պետ, ուսանողական խորհրդի նախագահը:

3.3. Գիտական խորհրդի անդամների թվի ***25 տոկոսը*** ուսանողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է ՀԵՀ ուսանողական խորհուրդը:

3.4. Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են Համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

3.5. Գիտական խորհրդի անվանական

## 3. COMPOSITION OF THE SCIENTIFIC COUNCIL

3.1. The number of selected ex-officio members cannot exceed 50 percent of the Scientific Council membership number.

3.2. The Rector (Chairman of the Scientific Council), Vice-Rectors, Scientific Secretary, Branch Directors, Deans of Faculties, Heads of Chairs, Head of the Library, Chairman of the Student Council are ex-officio members of the Scientific Council.

3.3. 25 percent of the number of members of the Scientific Council are students, whose nomination is carried out by the EUA Student Council.

3.4. Other members of the Scientific Council are elected by the relevant structural divisions of the University.

3.5. The nominal composition of the Scientific Council is approved by the Rector's order for a period of five years.

կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:

## 4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

4.2. Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են ***առնվազն ամիսը մեկ անգամ***:

4.3. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են գիտական խորհրդի նախագահը և գիտական խորհրդի քարտուղարը:

4.4. Գիտական խորհրդի քարտուղարը, գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն ***երեք օր առաջ***, արտահերթ նիստի անցկացման օրվանից առնվազն ***երկու օր առաջ***: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի անցկացման օրվանից առնվազն ***երեք աշխատանքային օր առաջ***, արտահերթ նիստի դեպքում՝ ***երկու աշխատանքային օր առաջ***:

4.5. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես

## 4. SCIENTIFIC COUNCIL WORK ORDER, SESSIONS PREPARATION AND CONDUCT PROCEDURE

4.1. The Scientific Council exercises its powers through regular and extraordinary sessions.

4.2. Regular meetings of the Scientific Council are convened at least once a month.

4.3. The meetings of the Scientific Council are prepared by the Chairman of the Scientific Council and the Secretary of the Scientific Council.

4.4. The secretary of the Scientific Council shall notify the members of the Scientific Council in writing about convening a session of the Scientific Council (regular or extraordinary) and the agenda of the session at least three days before the day of the regular session, at least two days before the day of the extraordinary session. The document package on the issues discussed at the given session of the Scientific Council (draft decisions, references-justifications, etc.) is sent to the members of the Scientific Council at least three working days before the date of the session, two working days in case of an extraordinary session.

4.5. Extraordinary meetings of the Scientific Council can be convened at the proposal of the Chairman of the Scientific Council, as well as at the request of 1/3 of the members of the Scientific Council. The chairman of the Scientific Council is obliged to ensure the convening of the session within 10 days after

նաև գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

4.6. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

4.7. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:

4.8. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

4.9. Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը: Ռեկտորի հանձնարարությամբ գիտական խորհրդի նիստը կարող է վարել գիտական խորհրդի անդամներից որևէ մեկը:

4.10. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

4.11. Նիստի օրակարգում ներառված

receiving the request for convening an extraordinary session.

4.6. A session of the Scientific Council is valid if at least 2/3 of the members of the Scientific Council participate in it.

4.7. The presence of the members of the Scientific Council is recorded by the Scientific Secretary before the session begins. In case of not providing the quorum, the registration process can be extended up to 30 minutes by the decision of the chairman of the Scientific Council, and after that, if the quorum is not provided, the session is postponed.

4.8. The session postponed due to the lack of quorum of the Scientific Council, with the same agenda, is convened on the general basis defined by this regulation.

4.9. The Rector, opening the session of the Scientific Council, provides information on the presence of a quorum and puts the agenda of the session to a vote. On the instruction of the Rector, any of the members of the Scientific Council can conduct the session of the Scientific Council.

4.10. The members of the Scientific Council can propose to include other issues in the agenda of the session, which is put to the vote in the established order.

4.11. The order of discussion of the issues included in the agenda of the session, the duration of the main and related reports, as well as the speeches are decided by the Scientific Council on the recommendation of the chairman of the Scientific Council.

հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

## 5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի ***անդամների ձայների պարզ մեծամասնությամբ***՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այդ որոշման ընդունման համար քվեարկության այլ կարգ չի սահմանել:

5.2. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնի վարիչի և դեկանի ընտրության ու այլ մրցույթները կատարվում են փակ, գաղտնի քվեարկությամբ:

5.3. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստը:

5.4. Քվեաթերթիկում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ»):

5.5. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահն, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի

## 5. VOTING PROCEDURE OF THE SCIENTIFIC COUNCIL

5.1. The decisions of the Scientific Council are adopted by a simple majority of the votes of the members of the Scientific Council by open voting, if the Scientific Council has not established a different voting procedure for the adoption of that decision.

5.2. Recruitment of positions, deputation of scientific and pedagogical positions and presentation of scientific titles, selection of the head of the chair and the dean and other competitions are carried out by closed, secret voting.

5.3. Ballots intended for closed, secret voting are prepared by the Scientific Secretary before the session of the Scientific Council.

5.4. The date of the meeting of the Scientific Council, the serial number, the content of the question to be voted on, the possible voting options ("for", "against") are indicated in the ballot paper.

5.5. Before voting, the chairman of the accounting committee, as necessary, provides the Scientific Council with information on the procedure for conducting voting and filling out the ballot.

5.6. A ballot is valid if only one option is voted on.

լրացման կարգի վերաբերյալ:

5.6. Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:

5.7. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

5.8. Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.9. Քվեարկության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի կողմից՝ նույն նիստում բաց քվեարկությամբ:

## 6. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6.1. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:

6.2. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ՀԵՀ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

6.3. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլ տրվելու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

6.4. Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

5.7. Counting committee members open the ballot box and count the voting results.

5.8. A minute is drawn up regarding the voting results, which is signed by all members of the counting committee.

5.9. Voting results are confirmed by the Scientific Council in open voting at the same session.

## 6. DECISIONS OF THE SCIENTIFIC COUNCIL

6.1. The decisions of the Scientific Council are implemented by the orders of the Rector.

6.2. The Rector has the right to suspend the decisions of the Scientific Council that do not derive from his/her powers, contradict the current legislation of the Republic of Armenia, the EUA charter, this regulation and other internal legal acts.

6.3. The decisions of the Scientific Council, which were suspended by the Rector due to procedural violations during the adoption, are put for reconsideration and re-voting at the same or another session of the Scientific Council.

6.4. Rector's orders to suspend the decisions of the Scientific Council must be justified and reasoned.

## 7. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ ***10 օրյա ժամկետում***: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

7.2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

## 7. THE MINUTES OF THE SCIENTIFIC COUNCIL SESSIONS

7.1. Sessions of the Scientific Council are recorded. The minute of the sessions is drawn up by the Scientific Secretary within 10 days after the session of the Scientific Council is over. The minute is signed by the Chairman of the Scientific Council and the Scientific Secretary.

7.2. The date of the session, the chairman, the secretary, the voting staff, the agenda of the session, the main provisions of the speeches, the content of the questions put to the vote, the results of the voting and the decisions taken by the Scientific Council should be mentioned in the minute.

## 8. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8.1. Հաշվիչ հանձնաժողովը ձևավորվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների փոխատեղման սկզբունքով: Յուրաքանչյուր նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի կազմի:

8.2. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և

## 8. ACCOUNTING COMMITTEE OF THE SCIENTIFIC COUNCIL

8.1. The accounting committee is formed by the decision of the Scientific Council, on the principle of transferring members of the council. At each session, the composition of the accounting committee is approved by the Scientific Council, on the recommendation of the Chairman of the Scientific Council, according to the composition of the Scientific Council.

8.2. The Accounting Committee organizes and conducts votes, clarifies the issues arising during voting, the voting procedure, ensures the observance of the voting procedure, draws up a minute on voting results and submits it to the Scientific Council for approval.

այն ներկայացնում է գիտական խորհրդի հաստատմանը:

## 9. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

9.1. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, որակի ապահովման, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:

9.2. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկությունների և եզրակացությունների ներկայացումը:

9.3. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

9.4. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:

9.5. Հանձնաժողովներն իրավասու են ՀԵՀ մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:

9.6. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

9.7. Հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների

## 9. COMMITTEES OF THE SCIENTIFIC COUNCIL

9.1. According to the decision of the Scientific Council, permanent or temporary commissions (competition, quality assurance, development of regulations, etc.) can be established as necessary, whose status, structure, competence and working procedure are defined by the Scientific Council.

9.2. The task of the commissions is to study, prepare and submit suggestions and conclusions to the Scientific Council regarding the issues of their regulatory sphere.

9.3. The structure and composition of the commissions is determined by the Scientific Council.

9.4. The commissions discuss issues related to their field at the instruction of the Scientific Council and/or the Rector.

9.5. The commissions are authorized to request and receive the necessary documents and materials from the EUA bodies, structural units and officials.

9.6. The meetings of the commissions are valid if at least 2/3 of the commission members are present.

9.7. The documents and conclusions of the commissions are approved by a simple majority of votes of the members present at the meeting.

9.8. In case of equality of votes, the vote of the committee chairman is decisive.

9.9. The members of the commission have the right to have a special feedback on the issues

ձայների պարզ մեծամասնությամբ:

9.8. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

9.9. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին:

discussed in the commission and present it to the Scientific Council.